Հայրապետական օրհնութիւնք եւ զոհունակութիւնք.

Կոնդակ յանուն պ. Համբարձումայ Երամեան, հիմնադրի Հայկական որբանոց վարժարանի Վանայ. թ. 647։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Մարտի 24. Սինոդը կարեւոր չը համարելով Աղեքսանդրապոլ գաւառի Նալբանդլի գիւղի համար երկրորդ քահանայ ունենալը՝ մերժեց Երեւանի թեմ. ատեանի միջնորդութիւնը Աստուածատուր Տ. Իսրայէլեանցի ձեռնադրութեան համար։ Գիւղը բաղկացած է 100 տնից, ունի մի քահանայ։

—Մարտի 24. Կարեւոր չը համարելով Շուշուայ գաւառի Զղարտի գիւղի համար երրորդ քահանայ ունենալը՝ մերժեց Ղարաբաղի թեմ. ատեանի միջնորդութիւնը Գրիգոր Տ. Յովհաննիսեանի ձեռնադրութեան համար։ Գիւղը բաղկացած է 130 տնից և ունի երկու քահանայ։

—Մարտի 24. Պատուիրել Երեւանի թեմ. ատեանի միջոցով Կարսի Հոգեւոր կառավարութեան, ընդունելու իր տեսչութեան տակ Կարս քաղաքի երկյարկանի տունը և տասը կրպակները, տալով տեղեկութիւն Տփխիսի դատաստանական պալատին իր վճռի պատճէնը ստանալու մասին։

— Մարտի 28. Պատուիրել Տփխիսի թեմ. ատեանին, բարձրագոյն թոյլտուութեան համաձայն թոյլ տալ իրենց ծխականների հետ Տաճկաստանից Ռուսաստանի Քութայիսի, Զերնոմորեայ, Կարսի և Կուբանի շրջանները գաղթած տաճկահպատակ Տ. Փիլիպպոս, Տ. Կարապետ, Տ. Աւետիս, Տ. Զաւէն, Տ. Մկրտիչ և Տ. Վաղինակ քահանաներին քահանայագործելու, ընդունելով նոցա ի շարս հոգեւորականութեան, նախապէս երդուեցնելով բոլորին ըստ օրինի Ռուսաց Կայսերու-

թեան հպատակութեան համար, պատուիրելով նոցա նաև, ընտրելու իրենց բնակութեան համար որոշ տեղեր։

— Մարտի 26. Պատուիրել Մայր Աթոռի Վանական Կառավարութեան կազմել ճարտարապետի ձեռքով նախագիծ և մանրամասն նախահաշիւ Մայր Աթոռի Դալմա կոչուած առուի վերայ կամուրջ կառուցանելու, որաեղով անցնելու է Հրազդանից արուած ջուրը Վաղարշապատի և Մայր Աթոռի վարելահողերի համար։

—Մարտի 28. Զանգեզուր գաւառի Եաղուբի հասարակութեան տանուտէրի բողոքը, որով յայտնում է Սինոդին Մազրայ գիւղի բնակիչ Վարդան Տ. Պետրոսեանի ձեռնադրութեան գործի համար կազմած համախոհականի կեղծութիւնը, թէ ծխականների ստորագրութիւններով և թէ իր՝ իբրև Տանուտէրի ստորագրութեամբ և կնքով, յանձնել Երևանայ թեմական ատեանին քննելու և յայտնելու մի և նոյն ժամանակ, թէ կա՞յ արդեօք կարևորութիւն քահանայի յիշեալ գիւղում։

—Ապրիլի 14. Պատուիրել հեռագրով Կարսի Հոգ. կառավարութեան կազմել նոր արձանագրութիւն տեղական ոստիկանութեան ձեռքով Տայլարի վարելահողերին Մանուկ Բաղդասարեանցի ինքնագլուխ տիրելու համար և ուղարկել Մ. Աթոռի փաստաբանին դատ բանալու։ Պատուիրել նաև Երթեմ. ատեանին հեռագրել անմիջապէս Խորէն քահ. Սատամբոլցեանցին Հոգևոր կառավարութեան անդամութեան պաշտօնից, վարելահողերը ընդունելու ժամանակին՝ նորա անկանոն գործողութիւնների համար։

— Ապրիլի 14. Թոյլ տալ Տփխիսի թեմ. ատեանին ընդունելու հոգևոր կոչման մէջ Նախիջևանի գաւառի Զանգանաբ գիւղի բնակիչ Մկրտիչ Տ. Մկրտչեանցին ձեռնադրելու քահ. Զաքարիայա քաղաքի ժողովուրդին հովուելու համար և Նարին Ս. Օծութեան հրամանի համաձայն յանձնել Գեր. Յուսիկ եպիսկոպոսին ձեռնադրելու յիշեալ ընծայացուին տեղեկութիւն տալով հանդերձ Տփխիսի թեմ. ատեանին և Գեր. առաջնորդին, գրել նաև Տփխիսի Բրիգադայի պետին արձակելու նորան զօրքի պահեստից՝ դլխաւոր շտաբի կան-

խաղոյն անօրէնութեան համաձայն։

—Ապրիլի 14. Պատուիրել Երևանի թեմ. առաջնորդին, յանձնել մի անաչառ քննչի օրինաւոր կերպով քննելու Շարուր Դարալագեազի գաւառի Քէշիշքեանդ գիւղի բնակիչ անչափահաս Մարուսիայի պսակի գործը և ժողովելով կարևոր տեղեկութիւններ նորա ծննդեան և տարիքի մասին արձանագրական մատեաններից, ուղարկել քննական գործը Սինոդի անօրինութեան։

— Ապրիլի 14. Ուղարկելով Շամախեցի Յարութիւն Գէորգեանցի խնդրագիրը Շամախու թեմական առաջնորդին, որով խնդրում է լուծել իւր պսակը Եղիսաբէթ Յակոբեանի հետ, վերջինիս պոռնկութեան պատճառով, պատուիրել առաջնորդին, քննել գործը մանրամասն և անաչառ կերպով և իւր եզրակացութեամբ հանդերձ ուղակել Սինոդի անօրէնութեան։

—Ապրիլի 14. Ընդ միշտ վերջացնել Վաղարշապատի Հրապարակի վերայ բեռնակրերից, սայլերից և զանազան մանրմունր նիւթեղէններ բերող և վաճառող գիւղացիներից հարկ առնելը և խնդրել Վաղարշապատի պ. գաւառապետին կարգադրել յայտնելու գաւառի գիւղացիներին Սինոդի այս կարգադրութիւնը։ Պատուիրել նաև Մ. Աթոռի Վանական կառավարութեան հեռացնել իր կարգած հարկահաւաքին և ներկայացնել Սինոդին հաւաքած դրամները և անդորրագրերի մատեանները։

—Ապրիլի 16. Պատուիրել Մայր Աթոռի Վանական կառավարութեան կազմել արձանագրութիւն ոստիկանութեան ձեռքով Վաղարշապատցի Յովակիմ Յակոբեանցի ինքնագլուխ այգի անկելու համար և առաջարկել նորան հաշտութեամբ յանձնելու այգին Մ. Աթոռի տիրապետութեան, հակառակ դէպքում արձանագրութիւնը ուղարկել Մ. Աթոռի փաստաբանին դատ բանալու Յակոբեանցի դէմ։

—Ապրիլի 16. Նախ՝ յայտնել երգուեալ հաւատարմատար Սամսոն Յարութիւնեանցին, թէ մարտի 19-ին հեռագրով պատուիրուած է Շամախու թեմ. առաջնորդին տալու իրեն մի հազար րուբլի Կարսի և Վաղարշապատի Աթոռապատ-

կան և եկեղեցապատկան վիճելի շինութիւնների զանազան ծախքերի համար և ապա ուղարկել յիշեալ փաստաբանին Տփխիսի դատաստանական պալատի վճռի պատճէնը յիշեալ կալուածների համար, յանձնարարելով նորան կարևորութիւնը անցնելուց յետոյ՝ վերադարձնել Սինոդ։

— Ապրիլի 16. Անկանոն համարելով Տփխիսի Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցու ծխականների կողմից 24 ծխականների վճիռը, եկեղեցու Ներսէս քահ. Ղամազեանցին կենսաթոշակ տալու համար նոյն եկեղեցու արդիւնքից, վերադարձնել այս խնդրին վերաբերեալ բոլոր գրութիւնները Տփխիսի թեմ. առեանին և պատուիրել նորան, կալմել տալ օրինաւոր (լրիւ) ժողով բոլոր ծխականներից և ենթարկելով խնդիրը ժողովի քննութեան, ծխականների նոր կազմած վճիռը իր եզրակացութեամբ ուղարկել Սինոդի անօրէնութեան։

— Ապրիլի 18. Ապացուցած տեսնելով ականատես վկաների ցուցմունքներով և ոստիկանութեան արձանագրութեամբ Իշխան Միքայել Երկայնաբազուկ Արղութեանցի պոռնկութիւնը, լուծել նորա պսակը Եղիսաբէթ Սողոմոնեանցի հետ, թոյլ տալով վերջնոյս ամուսնանալու ուրիշի հետ։

— Ապրիլի 18. Վեհափառ Հայրապետի ապրիլի 5-ին Սինոդին ուղղած կոնդակի համաձայն, նախ՝ պատուիրել Մ. Ամոռի գանձապահին արտաքոյ նախահաշուի բանալ վարկ առ այժմ մի հազար բուբլու և տալ Միւռոնօրհնութեան հանդէսի համար կազմած կարգադիր մասնաժողովին։ Երկրորդ՝ պատուիրել մասնաժողովին, այժմն իսկ հոգալ ինչպէս Ս. Միւռոնի նիւթերի համար, նոյնպէս և հիւրերի, այցելուների և ուխտաւորների կանոնաւոր ընդունելութեան կարևոր պատրաստութիւններ տեսնելու համար։

Ապրիլի 14. Պատուիրել Մ. Ամոռի գանձապահին, գրել ելից մատեանում 400 բուբլի և տալ Վանական կառավարութեան ուղարկելու Գերմանիա Մ. Ամոռի նոր ընդունուած միաբան Մկրտիչ Ղազարեանցին իր վերջնական երկասիրութեան տպագրութեան ծախքը հոգալու համար։

— Ապրիլի 21. Ընկերութեան վարչական եղանակը կա-

տարելադարձելու համար Բարձրագոյն հրովարտակը ըստ 530 յօդ. II հատ. ժող. օր. հրատ. 1892 թ. թարգմանել հայերէն և տալով տպագրութեան 1500 օրինակ, ուղարկել տպագրած օրինակները Ռուսաստանի Հայոց թեմական ատեաններին, ամէն մի թեմի եկեղեցիների թուի համեմատ և պատուիրել կարդալ հրովարտակը իւրաքանչիւր եկեղեցում հանդիսաւոր պատարագին։

— Ապրիլի 21. Պատուիրել Մ. Աթոռի կալուածների կառավարչին փութալ կատարելու Երևանի շրջանական դատարանի վճիռը ընդունելու դատաստանական պրիստաւի ձեռքով Վաղարշապատցի Մկրտիչ Կարճիկեանի ինքնագլուխ արնկած այդին։

— Ապրիլի 21. Թոյլ տալ Ղարաբաղի թեմ. ատեանին ընդունելու հոգևոր կոչման մէջ Զիւանշիրի գաւառի Ամաջաձոր գիւղի բնակիչ Յարութիւն Շահիջանեանին ձեռնադրելու քահ. Նուշուայ գաւառի Դաշբուլաղ գիւղի համար։ Ընծայացուն քննուել է թեմ. ատեանում, ընտրուած և ապահովուած է նոյն գիւղից, որ բաղկացած է 130 անից և ունի մի զառամեալ քահանայ անկարող քահանայագործութեան։

— Ապրիլի 25. Վերադարձնելով Երևանի գաւառի Փարաքար գիւղի անկանոն կազմած համախոհականը Երևանի թեմ. ատեանին, պատուիրել, նախապէս իմանալու թէ ունի գիւղի քահանան օգնական քահ.-ի կարևորութիւն և ապա կազմել տալ նոր ժողով ծխականների գործակցի նախագահութեամբ և տանուտէրի ներկայութեամբ և կանոնաւոր ընտրութեամբ և համախոհական վճռով ընտրել տալ օգնական քահանայացու, եթէ միայն կարևոր է։

— Ապրիլի 25. Կարևոր չը համարելով Զիւանշէր գաւառի Մեծ Շէն գիւղի համար երկրորդ քահանայ ունենալը, որ բաղկացած է 62 անից և ունի մի քահանայ, մերժել Ղարաբաղի թեմ. ատեանի միջնորդութիւնը Դանիել Տ. Սեդրակեանի ձեռնադրութեան համար։

— Ապրիլի 28. Պատուիրել Տփխիսի թեմ. ատեանին արգելել Զարեբայ վանքի վանահօրը անտառից փայտ կտրելը և քննելով նորա մասին եղած բոլոր բողոքները մանրամասն

և անաչառ՝ ուղարկել Սինոդ իր եզրակացութեամբ։

— Ապրիլի 28. Ուղարկելով Մ. Աթոռի Վանական կառավարութեան Օշական գիւղի այն բնակիչների ցուցակը, որոնք ինքնագլուխ այգիներ են անկել, պատուիրել ստուգել և յայտնել Սինոդին թէ ե՞րբ են անկել, ո՞ր կողմ, ի՞նչպիսի տեղերի վրայ և իւրաքանչիւրը ո՞րքան տարածութեամբ, յետ պահանջելու դատաստանական կարգով։ Գրել նաև Վաղարշապատի պ. գաւառապետին կարգադրել արգելելու ինքնագլուխ այգիների անկելը։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՑԱՒԸ.

«Զիա՜րդ դժուարին է՝ որ զինչս ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ»։
Մարկոս Ժ. 23.

ՇԱՏԵՐԸ կլինեն երևի, թէ ինչ առթիւ է ասել Քրիստոս այս խօսքերը։—Մի հարուստ երիտասարդ եկաւ Նրա մօտ, առաջը չոքեց ու հարցրեց, թէ ի՞նչ անէ, որ յաւիտենական կեանքի տիրանայ։ Այդ մարդու բոլոր շարժումներն ու խօսքերը ցոյց են տալիս, որ Նրա ցանկութիւնն անկեղծ էր, նպատակը մաքուր. երբ Քրիստոս յիշեցնում է Նրան Աստուծոյ պատուիրանները, որ ամէն հրէայ մանկութիւնից սովորած պէտք է լինէր, և հասկացնում կարծես, թէ մի գուցէ Նրա միտքն է խոյս տալ սոցանից և աւելի հեշտ ճանապարհ գտնել յա-